# ՀԱՅՐԻԿԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ



ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
(1937–1994)

Մարդկային կեանքը հոգու ինքնաճանաչման նպատակասլաց գործընթաց է: Դա ինձ ճշմարիտ է թւում՝ յատկապէս երբ մտաբերում եմ Ղուկասի որդի Ռոբերտին:

Մինչեւ իր կեանքի վերջին օրը (զոհուել է 1994ի Մայիսի 1ին, Մարտակերտում, 58 տարեկան հասակում), Ռոբերտը պարապում էր մարմնամարզութեամբ: Նրան ճանաչում եմ մանուկ հասակից: Սկզբնական օրերին մարմինը կոփում էր՝ հայեցակէտ ունենալով բնական ուժը, մարմնական մեծազօրութիւնը: Տարիների հետ բիւրեղացաւ ձգտումի կատարելատիպը, եւ նա ուշադրութիւնը բեւեռում էր մարդկային հոգու զարգացման խնդիրների վրայ: Իր ամենայն ուժերը պատանի հասակից սովորեց ծառայեցնել մարդկանց, ազգին ու հայրենիքին:

Ռոբերտը իրեն բազմակողմանի նախապատրաստում էր ծայրայեղ վիճակների, եւ երբ դրանք վրայ էին հասնում, լինում էր իր բարձրութեան վրայ: Ապացոյցը աղետալի իրադարձութիւնների ժամանակ նրա արժանավայել պահուածքն էր, որ նա ցուցաբերեց Չեռնոբիլից մինչեւ Արցախեան հերոսամարտ: Լինելով փրկարար ջոկատի անդամ, բնական է, որ առաջիններից է նետուել երկրաշարժի գօտի եւ վեհանձնօրէն մասնակցել այդ աշխատանքներին:

Հակամարտութեան առաջին իսկ օրից մարտնչել է սահմանամերձ շրջաններում (բացառեալ Կապանը եւ Մեղրին): «Գարեգին Նժդեհ» փրկարարական ջոկատը առաջիններից մէկը վերածուեց ինքնապաշտպանական ջոկատի:

Ծնունդով արծուաշէնցի էր եւ երկար ժամանակ հայրենի գիւղում պահպանել է ամենավտանգաւոր դիրքերը: Ռոբերտին վերջին անգամ հանդիպել եմ Արծուաշէնը յանձնելու օրերին: Ամէնուր իրարանցում էր, մորմոք ու ատամների կճրտոց: Ռոբերտը ամենավերջինն էր դուրս եկել գիւղից եւ հրամանատարութեան առաջադրանքով կրկին *Հայրիկին* (այդպէս էին կոչում 56ամեայ «ծերուկ»ին), որը աչքի էր ընկնում ամուր կազմուածքով եւ արագաշարժութեամբ, երեք զինուորի հետ ուղարկում են Արծուաշէն: Գիւղը արդէն թշնամու ձեռքում էր, երեւում էին տանկերը: Թշնամին նկատում է անտառազուրկ տեղանքով մօտեցողներին եւ փորձ է անում գերել նրանց: Սակայն տեղանքի քաջիմացութիւնը Ռոբերտին հնարաւորութիւն է տալիս խումբը դուրս բերել անտառ: Մեծագոյն դժուարութեամբ, մէկ օր յետոյ, հասնում են դիրքերին: Նա այդ ծանր օրերին էլ իրեն արժանավայել էր պահում՝ հանգստացնելով մարդկանց, որ պատերազմ է, ամէն ինչ կը պատահի:

Այնուհետեւ եղել է «Արծուաշէն» ջոկատի փաստացի հրամանատարը: Երկար ժամանակ յոյսով սպասում էր, թէ երբ հրաման կ՚առնի Արծուաշէնը վերցնելու: Ի վերջոյ համոզուելով, որ դա շուտ չի լինի, վերադառնում է Երեւան, ուր ընտանիքն էր՝ կինը, երեք երեխաները եւ չորս թոռնիկները: Մի քանի օր անց նա միանում է առաջին պատահած զօրամասին եւ մեկնում Մարտակերտ:

Մարտերի ընդմիջումներին երիտասարդներին ծանօթացնում էր մարտարուեստի եւ ռազմագիտութեան գաղտնիքներին, մարզում նորակոչիկներին:

Հանգիստ ու համբերատար մարդը, որ գրոհի ժամանակ նոյնիսկ չէր տրորում թուրքերի դիակները, ցատկում էր դրանց վրայով, գերիների նկատմամբ միշտ մարդկային վերաբերմունք էր ցուցաբերում, նա առանձնակի խիզախութեամբ էր կռւում: Ցաւօք, երբ հրադադարին մի քանի օր էր մնացել, ընկաւ ռազմիկը, ականի բեկորներից:

Հայրի՛կ, քո ընտանիքն ու ազգը հպարտանալու մեծ առիթ ունեն:

Աշոտ Պետրոսեան